Ցուդա առաքեալ եղբայր տեառն սառ քարոզութեամբ կատարեցաւ, և գերեզման նորա պատուի ցարդ յեկեղեցւոջն Հայոց. յետ նահատակութեան նորա եկեալ եղբօրն հարազատի, այն է Սիմոնի կամ Շմաւոնի Կանանացւոյ և քարոզեալ, կատարեցաւ և ինքն յՈւրումիէ կամ Ուրմի, զոր 'ի Թեկանց Որմիոյ ասեն վկայաբանք, և թուի 'ի հիւսիսոյ նորին լինել, քանզի նշանակի յայնմ կողման գետակ մի Ուրմի անուն: Որմիա քաղաք հին է, այլ չկան 'ի նմա նշանաւոր հնութիւնք, բայց աշտարակ մի, և մզկիթ հին, և եկեղեցին Հայոց. Նստի յՈրմի Խան պարսիկ կուսակալ, ընդ որոյ ձեռամբ են 10 վիճակք և 700 գեօղք: Բնակիչք քաղաքին 20,000 աւելի կամ պակաս, յորս ոչ սակաւ Նեստորականք, Հրեայք և Հայք. և Ամերիկացի քարոզիչք հաստատեալ ունին վարժարան 'ի նմին: Վիճակն Որմոյ բարեբեր և բարգաւաճ է յոյժ. բերէ որիզ և բամբակ և ծխախոտ և խաղող ընտիր և միրգս. և 'ի լերինսն անձաւք ձեռագործք և հողաբլուրք և մնացուածք հին շինուածոց ոչ սակաւք. այլ և բերդք 'ի լեռնակողմանս: Քուրդք ունին զարևմտեան և զհարաւային կողմանս գաւառիս:

108. Հարաւային արևմտեան ծայր երկրին Ուրմիոյ կոչի ՈՒՇՆԷ կամ ՇՆՈՅ երկիր յարևմտից Րէվանտըզոյ, բնակեալ 'ի Զերզաւ տոհմէ Քրդաց, 'ի 40 գեօղս, որոց գլխաւոր է ՈՒՇՆԷ քաղաքագեօղ 'ի բարձու 4330', տամբք 200 կամ աւելի. յորում յԷ դարու նստէր եպիսկոպոս Ասորի, և ուխտատեղի է գերեզման նորա: Ի հարաւոյ մօտից Իւշնէի ընդ բարձրաբերձ լերինս որ սահման հատանեն ընդ օսմանեան Քրդստան, իբր 5 ժամուք հեռի 'ի քաղաքէն են լեռնանցք 9300' բարձր, և արձան սեպագիր ՔԷԼԻ-ՇԻՆ կոչեցեալ, որ է կապոյտ սիւն, կիսեղծ. այսպիսի արձան կայ և 'ի մօտից նորին յայլում լերին Րէվանտըզայ, և թուի յԱսորեստանեայց կամ 'ի մերոյն Արամայ կանգնեալ, զի սահմանածայրք Հայոց և Մարաց էին լերինքն, և իջեւանն կամ գեօղ առ երի արձանին Հայք անուն յիշի յԺԳ դարու. 'ի հարաւոյ արձանին ամբառնայ Շէյխիլու լեառն 10500': Յորոց ելից 'ի հարաւոյ ծովուն Որմիոյ ցհարաւային սահմանս այժմեան Ատրպատականի և ընդ արևելս ցԹաթաւ գետ (որ թափի 'ի ծովն յելից հարաւոյ) կան քրդաբնակ լեռնավայր վիճակքն ՍՕԼՏԸԶ, ԼԱՀԻՃԱՆ, ՍՕՈՒՔ կամ ՍՈՒՃ-ՊՈՒԼԱՔ, բնակեալք 'ի Միքրի, Պիլպաս, Մինաէհ, Բիրան, և յայլոց տոհմից Քրդաց. գտանին աւերակք և 'ի սոսին, և սեպագիր արձան մի 'ի Դաշբէնդ առ Թաւթաւ գետով:

109. Զարմանալի ևս մնացուածք հնութեանց և աւերակք կան յարևելակողմն վիճակացս և մեծի գետոյն Ճաղատու որ յելից Թաւթաւայ մտանէ 'ի ծովն. յաջմէ նորա կայ Սաքըզ կամ Սէքան-քալէ բերդաւան, առ որով աւերակք քարաշէն կամրջի և բերդի, որ ձեռակերտ Սասանեանց թուի: Ի նմին կողման գետոյն բազում ժամուք վերագոյն 'ի հիւսիսոյ կայ Քաշաքէր բերդաւան. իբր երկժամեա հեռի յարևմտից հիւսիսոյ նորա յահեկէ գետոյն՝ գեօղն Էրմէնի-պուլաղ, որ վկայէ անուամբն ցայս վայր ձգեալ զհայ ձեռն և զբնակութիւն: Առ երի գետոյն ընդ մէջ Քաշաւերայ և հարաւային ծայրից ծովուն Որմիոյ կայ Մէրհէմէթապատ քաղաքաւան 'ի ՄԻՅԱՆՏԱՊ վիճակի. առ որով կան աւերակք, ձեռագործ անձաւք և քանդակք և սիւնք 'ի Շէյտանապատ և Սաֆէնդ կոչեցեալ վայրս, յորս և արձանագիր մի նման պահլաւիկ տառից. և յելից հիւսիսոյ նոցա առ Լէյլան գեօղիւ մեծագոյն աւերակ քաղաքատեղւոյ Գալէի Պախտէ կոչեցեալ: Աւերակքս այսքիկ համարին արդ յոմանց լինել առ ԳԱՆՁԱԿ կամ ԿԱԶԱ քաղաքաւ Ատրպատականի, որիշ 'ի Դավրիժոյ. միւս ևս Գանձակ և բնաւիցն վեհագոյն համարին աւերակքն Թախտի-Սիւլէյման կոչեցեալ այժմ առ ակամբք Ճաղատու գետոյ, յարևելեան հարաւային եզր Ատրպատականի, և սա ինքն ԵՐԿՐՈՐԴՆ ԵԿԲԱՏԱՆ, որում տիրացաւ Տրդատ արքայ յարշաւելն 'ի Պարս. և անդ էր գլխաւոր և առաջին ատրուշանացն հրապաշտից, զոր Հերակլ կայսր 300 ամօք յետ Տրդատայ՝ աւերեաց ըստ մասին, և ընդ բազում դարս մնացուածք նորին զարմանս արկանէին ուղևորաց բանասիրաց, որպէս և յամին 1837 Ռաւլինսոն Անգղիացի բանասէր հետաքննին եգիտ անդ պարիսպս քարաշէնս և ծով կամ աւազան մեծ 'ի միջի, և առ երի զտեղի ատրուշանին, այլովք հանդերձ:

110. Ծովն՝ զորոյ զարևմտեան, զհարաւային և զհիւսիսային կողմանս տեղագրեցաք՝ ՈՐՄԻԱ կոչեցեալ 'ի հասարակի յանուն Որմի քաղաքի, Սպաւտա և Մարցիանէ 'ի Յունաց նախնեաց, և 'ի մերոյն՝ Ծով Կապուտան կամ Ծով Գաղարէտի, և յարևելեայց յօտարաց Ծով Հայոց (Տէրէտժի-Էրմէնիտան), ընդ մէջ Պարսկահայոց և Ատրպատականի ձգի 'ի հարաւոյ ընդ հիւսիս երկայնեալ իբրև 80 մղոն կամ աւելի, այլ ընդ լայնն իբրև 20-22 ևեթ. աղի է և դառնահամ և անձկնաբեր, և ոչ խորայատակ որպէս զՎանայն, այլ առ առաւելն 46' ևեթ, և ոչ շատ յուզի 'ի հողմոց. և բարձրութեամբն ևս նուազ, իբրև 4000' գոլով, աւելի կամ պակաս. սուղ ինչ 'ի միջոյն 'ի վայր է 'ի նմա կոյտ կղզեաց ութից մեծագունից քան զծովուն Վանայ և պարեխից աւելի քան զյիսուն. 'ի միում յայնցանէ որ Թէլա կոչի և Գօյուն տաղը՝ Հուլաղու խան Թաթարաց շինեաց բերդ և գանձատունս յԺԳ դարու, ըստ ոմանց անդ թաղեցաւ:

Բ. ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՆԱՀԱՆԳ

111. Արևելակողմն ծովուն Որմիոյ ցսահմանս Կիլանայ առ Կաղբից ծովուն՝ է բուն նահանգն ԱՏՐՊԱՏԱԿԱՆ, 'ի հիւսիսոյ կողմանէ ձգեալ ցԳարատաղ և Մուղան դաւառս կամ ցԵրասխ գետ, և 'ի հարաւոյ ցՔիւրտիստան Պարսից և ցԻրագ-Աճէմ, այն ինքն է հին աշխարհն Մարաց կամ Մեծ Մարք. քանզի և Ատրպատական մասն համարէր նորին և փոքր կոչէր Մարք. այլ զի մերթ ընդ ձեռամբ նոցա և մերթ Հայոցս նուաճիւր, կամ կէս սորա և կէս նորա, վասն այն և կոչէր Ատրպատական Հայոց և Ատրպատական